

## հողված 301

Այն, որ Վարդան Մալխասյանին և Ժիրայր Սեֆիլյանին առաջադրված մեղադրանքը որևէ կերպ հնարավոր չէ հիմնավորել իրենց ասածով և արածով, կարծես արդեն ակնհայտ է բոլորի համար: Այն, որ այսպիսի հողված գոյություն չունի շատ երկրների քրեական օրենսգրքում, պայմանավորված է նրանով որ նման ձևակերպումները բացարձակ հեղեղուկ են և բազմաթիվ հնարավորություններ են ստեղծված կամայականությունների համար: Այս տեսակետից ճիշտ կլիներ սույն հողվածի վերացումը, ինչը գուցե և այս պահին կարող են նախաձեռնել ներկա պատգամավորները:

Ամբողջ աշխարհին ոտքի ենք հանել Թուրքիայի 301 հողվածը փոխելու, վերացնելու համար, իսկ մենք դատում ենք Հայաստանի քաղաքացիներին նույն 301 խայտառակ հողվածով: Չնայած ձևակերպումների արտաքին տարբերությանը, թե Թուրքիայի և թե Հայաստանի քրեական օրենսգրքի 301 հողվածները ծառայում են նույն նպատակին՝ շինծու հիմք ստեղծել քաղաքական հետապնդումների համար:

Քանի որ պատգամավորների ստեղծած հանձնաժողովը նպատակ է դրել պարզել Վարդան Մալխասյանի և Ժիրայր Սեֆիլյանի կալանավորման բուն պատճառները, ապա փորձեն առանձին պահեր պարզաբանել Վարդան Մալխասյանի մասով:

Վերջին ամիսներին Մալխասյանը առճակատման մեջ էր Արագածոտնի մարզի մի շարք ղեկավարների հետ՝ պայմանավորված նրանց գործունեության մեջ տեղ գտած չարաշահումներով, օրինազանցություններով և հանցագործություններով: Մալխասյանը տասնյակ ելույթներով, հողվածներով ոչ միայն բացահայտում էր այդ չարաշահումները, այլև պաշտպան էր կանգնում այն քաղաքացիներին, որոնք հայտնվել են կոռումպացված չինովնիկների և իրավապահ մարմինների ստեղծած մաֆիոզ կառույցների ճիրաններում (կից ներկայացնում ենք այդ հարցազրույցների և հողվածների մի մասը): Վերը նշված գործունեության արդյունքում մարզային դատախազությունը ստիպված էր հարուցել մի շարք քրեական գործեր, կալանքի տակ վերցնել մի քանի պաշտոնյաների: Սակայն այս ամենը ունեցավ նույն վախճանը, ինչ որ բազմաթիվ այլ դեպքերը: Մարզ ժամանեց Ռոբերտ Քոչարյանը, զայրացած խոսեց պաշտոնյաների չարաշահումների մասին և ..... Բոլոր գործերը կարճվեցին, իսկ Վ.Մալխասյանը դարձավ մաֆիայի թիրախ:

Հանդիսանալով «Հայրենիք ու Պատիվ» կուսակցության քաղխորհրդի անդամ (մի կուսակցություն, որի շարքերում ընդգրկված են ազգային անվտանգության, ՆԳՆ-ի և դատախազության նախկին բարձրակարգ, պրոֆեսիոնալ աշխատակիցներ), նա իր գործընկերների հետ միասին բացահայտել է հանրապետությունում գործող խոշոր կրիմինալ համակարգեր, նրանց կողմից ազգային ունեցվածքի հափշտակումներ, ինչպես նաև նախապատրաստվող կրիմինալ պետական հեղաշրջումը: Մասնավորապես բացահայտվել են այն ստվերային մեխանիզմները, որոնցով յուրացվել են յուրաքանչյուր ընտանիքի ապրուստի միջոցների զգալի մասը: Ակնհայտ էր, որ այս ամենը ոչ միայն չի արժանանալու պատկան մարմինների օրինական արձագանքին, այլ հակառակը՝ նախաձեռնողները իրենք պետք է դառնային այդ մարմինների թիրախ:

Լինելով ՆԳՆ համակարգի երկար տարիների աշխատող, բարձրակարգ պրոֆեսիոնալ Մալխասյանը խիստ մտահոգված էր երկրում քրեածին իրավիճակի սրընթաց աճից և հատկապես դրսևորվող որակների նոր ամբողջականությունից, ինչը սպառնում է նույնիսկ հայ տեսակի այլասերմամբ, այլափոխմամբ: Նա փորձում է, գոնե կտրուկ արտահայտություններով, ծայրահեղ որակավորումներով, շահի մոլուցքից մթազնաձ ուղեղով և խամրած հոգով չինովնիկին, պետական

պաշտոնյային, բացատրել, որ նրա անօրենության, անբարոյականության և հինգերորդ դասարանցի աշակերտի ինքնասպանության միջև անմիջական կապ կա: Նա գիտի, որ Խորհրդային միության յոթամասուն տարիների ընթացքում ցածր դասարանցիների շրջանում չի եղել ոչ մի դեպք, իսկ դրանք բազմաթիվ են եղել այսօրվա Հայաստանում, ինչպես նաև չի եղել այնպիսի դեպք, որ մայրը սպանի իր երեխաներին: Նման և այդ կարգի այլ դեպքեր եղել են միայն թուրքական տիրապետության օրոք՝ ջարդերի և կոտորածների ընթացքում:

Մալխասյանը փորձում էր ուշքի բերել պաշտոնյաներին, ստիպել նրանց փոխել իրավիճակը: Սակայն փողի մոլուցքն ու իշխանատենչության հմայնքն այնքան հզոր էին, որ նրանք այդպես էլ չգիտակցեցին ասվածի իմաստը, չհասկացան Մալխասյանի ծիզը հետ պահել իրենց խոշորագույն պետական հանցագործությունից, փոխարենը՝ ամեն ինչ արեցին նրա բերանը փակելու համար:

Գերազանց գիտակցելով, որ երկրում վերը նշված արատավոր զարգացումներում բեկում մտցնելը հնարավոր է սկզբունորեն նոր որակ կյանքի կոչելով, Մալխասյանը ողջունեց Ժիրայր Սեֆիյանի և նրա ընկերների նախաձեռնությունը կյանքի կոչել հազարամյակներում բյուրեղացված և արցախյան պատերազմում կրկին կյանքի կոչված կամավորականության սկզբունքը, այս անգամ այն կիրառելու երկրում ներքին կյանքը բնականոն ընթացքի բերելու համար: Սակայն երկրի բնականոն զարգացման ընթացքն իր մեջ վտանք է պարունակում արատավոր ուղու սպասարկողների համար: Եվ առաջին անգամ մեր ողջ պատմության ընթացքում Հայոց ռազմավարական թիվ 1 զենքի՝ կամավորականության սկզբունքի դեմ հանդես է գալիս ոչ թե թշնամին, այլ Հայաստանի Հանրապետության պետական ապարատը: